

**ՀԻՆ ԳՈՐԻՍԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՐՋԱԿԱ  
ՔԱՐԱՅՐՆԵՐԻ ԵՎ ՄԵԼԻՔ ՕՀԱՆԻ ԱՊԱՐԱՆՔԻ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳԻՐ**








## Պատմական ակնարկ

Գորիս քաղաքը Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է և կարող է հանդիսանալ ոչ միայն Սյունիքի, այլև ողջ Հայաստանի զբոսաշրջության կենտրոններից մեկը: Գորիսը գրավիչ է հատկապես իր հին բնակատեղիով, որտեղ առկա են հնագույն եկեղեցիներ, ժայռափոր կացարան-բնակարաններ, յուրօրինակ հարտաքաղաքային կառուցված մելիքական ապարանքներ և այլն: Հին Գորիսի խոշոր կառույցներից է 1776 թ. կառուցված Ս. Հովհաննես եկեղեցին, որը 2009-2013 թթ. վերակառուցվել է «Երկիր և մշակույթ» կազմակերպության, Վիեն քաղաքի, «Վիեն-Գորիս» կազմակերպության միջոցներով՝ Ֆրանսիայից և ՀՀ-ից ժամանած կամավորների մասնակցությամբ:



*Հին Գորիս. կենտրոնում՝ Սբ Հովհաննես եկեղեցին, որից աջ՝ Մելիք Օհանի ապարանքը*

Հին Գորիսի նշանավոր տոհմերից մեկի ներկայացուցիչ էր մելիք Օհանը, ով հանդիսացել է Ս. Հռիփսիմե եկեղեցու կառուցողը. դա է վկայում եկեղեցու հարավային մուտքի բարավորի վրայի արձանագրությունը: Մելիքի տունը գտնվում է Ս. Հռիփսիմե եկեղեցուց արևելք, մոտ 70 մ հեռավորության վրա և այժմ գտնվում է կիսավեր վիճակում: Այն իրենից ներկայացնում է ֆարայրին կից երկհարկ ուղղանկյուն հատակագծով մի շինություն, որի համար որպես պատ ծառայել է հարակից ժայռերից մեկը: Մելիքական ապարանքը կառուցված է կրաշաղախով, բազալտե կոպտատաշ ֆաբերով և ունի շրջակայքի նկատմամբ իշխող դիրք:

Ապարանքի և Ս. Հռիփսիմե եկեղեցու շրջակայքում կան տարբեր չափերի բազմաթիվ ֆարայրներ, որոնք ժամանակին հանդիսացել են կացարան հին գորիսեցիների համար: Կացարաններից մեկը հնում հանդիսացել է ժայռավոր քաղաքում, որտեղ ներկայացումներ են բեմադրվել ընդհուպ մինչև 20-րդ դար: Կացարաններից շատերն ունեն լուսամուտներ, երդիկներ, ժայռավոր պահարաններ և նեղ միջանցքներով կապված են մեկը մյուսի հետ:



Տեսարան հին Գորիսից 1925թ.

## Նպատակը և առաջարկներ



Հին Գորիսը լճվել է 20-րդ դարի սկզբներին և այսօր այն իր կառույցներով ներկայանում է ավերակ մի բնակավայր՝ հանդիսանալով պատմահնագիտական արգելոց-թանգարան: Հաշվի առնելով, որ Հին Գորիսը հանդիսանում է փարայր-կացարաններով միջնադարյան բացառիկ հուշարձանի եզակի օրինակ և գտնվում է բավականին վտանգված վիճակում (որոշ փարայրներ կանգնած են փլուզման եզրին) առաջարկում ենք իրագործել բնակատեղիի ուսումնասիրման, մասնակի վերականգնման և բարեկարգման ծրագիր: Դրանց, ինչպես հարկն է, պետք է նախորդեն հնագիտական աշխատանքները: Ծրագիրը կնպաստի հուշարձանի պահպանմանն ու հանրայնացմանը: Առաջարկ կա նաև փարայրներից մի ֆանիսը բերել որոշակի օգտագործման զանազան նպատակներով: Օրինակ, Մելիք Օհանի ապարանքը կարելի է վերածել ժողովրդա-ազգագրական թանգարանի, այսինքն բերել մոտավորապես այնպիսի տեսքի, ինչպիսին որ այն եղել է նախնական օգտագործման ժամանակ՝ վերածելով այն հանգստի սրահի: Դրանով մենք կունենանք հին կացարանի վերակազմաւորւոն, ինչը մեծ հետաքրքրություն կառաջացնի՝ վերածելով այն բացօթյա թանգարանի: Միաժամանակ որոշ փարայրներ կարող են դառնալ հուշանվերների տաղավարներ: Բնականաբար հուշարձանի հանդեպ հետաքրքրությունը կարող է նպաստել զբոսաշրջության զարգացմանը և ապահովել նաև եկամուտներ:



*Հին Գորիս. վերականգնված Սբ Հռիփսիմե եկեղեցին և շրջակա փարայրները*





*Մելիք Օհանի ապարանգի ներկայիս տեսքը*




*Մելիք Օհանի ապարանգի ներքի տեսքը*



## Առաջարկվող գործողությունները


Հաշվի առնելով նման գաղափարներն ու առաջարկները, 2014 թ. ծրագրի իրականացման համար առաջարկվում է իրագործել հետևյալ գործողությունները.

1. նախապես կատարել համալիրի ամբողջական հնագիտական ուսումնասիրություններ՝ ընդգրկելով Ս. Հռիփսիմե եկեղեցուց արևելք գտնվող մոտ 1.7 հեկտար տարածքը,
2. կատարել մանրակրկիտ չափագրություններ,
3. կատարել փաստավավերագրական լուսանկարներ,
4. կատարել մասենագրական և արխիվային նյութերի ուսումնասիրություն,
5. իրականացնել տարածքի գեոդեզիական հանույթի փարտեզագրում,
6. կատարել տարածքի սեյսմիկ և երկրաբանական ուսումնասիրություններ,
7. իրականացնել էսֆիզային նախագիծ, որը պետք է ներկայացվի ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի ֆինանսավարկմանը հաստատմանը,
8. իրականացնել ճարտարապետական աշխատանքային գծագրեր



*Սբ. Հռիփսիմե եկեղեցուն հարող տարածքների վերականգնման էսֆիզային առաջարկ՝ հատակագիծ*





Սբ Հռիփսիմն եկեղեցուն հարող տարածքների վերականգնման էսքիզային առաջարկ 'համայնապատկեր



Սբ Հռիփսիմն եկեղեցուն հարող տարածքների վերականգնման էսքիզային առաջարկ 'հեռանկար





*Վերականգնված և վերականգնման համար նախատեսվող տարածքները*

## Նախահաշիվ

Այս բոլոր աշխատանքները նախատեսվում են իրականացվել 2014 թ. համար, որի բյուջեն կկազմի.

1. հնագիտական ուսումնասիրություններ—տևողությունը կկազմի 4 ամիս՝ 2 հնագետի (ամիսը՝ 200 հազար դրամ) և 5 բանվորի (օրը՝ 5000 դրամ) մասնակցությամբ, ընդհանուրը կկազմի՝ 4,5 մլն դրամ,
2. չափագրություններ—տևողությունը կկազմի 10 օր՝ 3 հոգու մասնակցությամբ, ընդհանուրը կկազմի՝ 1 մլն դրամ,
3. փաստավավերագրական լուսանկարների համար գումար անհրաժեշտ չէ,
4. մատենագրական և արխիվային նյութերի ուսումնասիրություն—ընդհանուրը կկազմի՝ 1 մլն դրամ,
5. գեոդեզիական հանույթի ֆարսեզագրում—ընդհանուրը կկազմի՝ 500 հազար դրամ,
6. տարածքի սեյսմիկ և երկրաբանական ուսումնասիրություններ—ընդհանուրը կկազմի՝ 500 հազար դրամ,
7. էսքիզային նախագծի իրականացում—ընդհանուրը կկազմի՝ 500 հազար դրամ,
8. հարտաբալետական աշխատանքային գծագրերի իրականացում—ընդհանուրը կկազմի՝ 2 մլն դրամ:

Ընդհանուր բյուջեն կկազմի 10 մլն դրամ:



| № | ծառայություններ                                      | ֆանակը | արժեքը    | դրամ              | դոլար        | եվրո         |
|---|------------------------------------------------------|--------|-----------|-------------------|--------------|--------------|
| 1 | հնագիտական ուսումնասիրություններ                     |        |           | 4 500 000         | 11111        | 8036         |
|   | հնագետ (4 ամիս)                                      | 2      | 800 000   | 1 600 000         | 3951         | 2857         |
|   | բանվոր (100 օր)                                      | 5      | 500 000   | 2 500 000         | 6173         | 4464         |
|   | գործիչներ և այլ անհրաժեշտ իրեր                       | 1      | 400 000   | 400 000           | 988          | 714          |
| 2 | չափագրություններ                                     | 1      | 1 000 000 | 1 000 000         | 2469         | 1786         |
| 3 | փաստավավերագրական լուսանկարներ                       |        |           | 0                 | 0            | 0            |
| 4 | մատենագրական և արխիվային նյութերի ուսումնասիրություն | 1      | 1 000 000 | 1 000 000         | 2469         | 1786         |
| 5 | գեոդեզիական հանույթի ֆարսեզագրում                    | 1      | 500 000   | 500 000           | 1235         | 893          |
| 6 | տարածքի սեյսմիկ և երկրաբանական ուսումնասիրություններ | 1      | 500 000   | 500 000           | 1235         | 893          |
| 7 | էսֆիզային նախագծի իրականացում                        | 1      | 500 000   | 500 000           | 1235         | 893          |
| 8 | նարտարապետական աշխատանքային գծագրերի իրականացում     | 1      | 2 000 000 | 2 000 000         | 4938         | 3571         |
|   | <b>Ընդհանուր</b>                                     |        |           | <b>10 000 000</b> | <b>24691</b> | <b>17857</b> |

**Ընդհանուր՝ 10 000 000 դրամ / 24 691 դոլար (1\$=405 դրամ)/ /17 857 եվրո (1€=560 դրամ)/**

*Կազմեցին «Երկիր և Մշակույթ» կազմակերպության անդամներ՝*

**Դ. Դավթյան, պատմաբան**

**Ս. Նալբանդյան, նարտարապետ**

**Հ. Բադալյան, հնագետ**

**Խ. Վարդանյան, սարկավագ**

**Ա. Նալբանդյան, հնագետ**

**Մ. Քոչարյան, նարտարապետ**

*Ծրագիրը պատրաստող աշխատանքային խումբը շնորհակալություն է հայտնում Գորիսի քաղաքապետարանին՝ ծրագրի պատրաստմանը օգնելու և աջակցելու համար:*

**2013թ. դեկտեմբերի 20**